

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՖԵԴԵՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)



«ՐՈՒՇԵՆԻՆ»—1937

101 MAR 2010

342(47)
12-11 16

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

05 FEB 2007

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԳԵԴԵՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ «ԲՈԼՇԵՎԻԿ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ — 1937

24 JUL 2013

34800

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
17-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻՎ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՐԵՆՔԸ) ՀԱՍՏԱՏՅՈՒ ՄԱՍԻՆ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱ-
ԿԱՐԳ 17-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՎՈՐՈՇՈՒՄ Ե՛
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻՎ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱ-
ՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԻ) ՆԱԽԱ-
ԳԻԾԸ ՀԱՍՏԱՏՅՈՒՆ ԱՅՆ ԽՄԱԳՐՈՒԹՅԱՄԲ, ՎՈՐ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ե ՀԱՄԱԳՐՈՒՄԱՐԻ ԽՄԱԳՐԱ
ԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ:

Համագումարի նախագահություն

Մոսկվա, Կրեմլ

21 հունվարի, 1937 թ.



3354

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻՎ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

ԳԼՈՒԽ I.

ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՈՒՎԱԾ 1. Ռուսաստանի Խորհրդային
Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետու-
թյունը բանվորների և գյուղացիների սո-
ցիալիստական պետութայուն է:

ՀՈՒՎԱԾ 2. ՌԽՖՍՀ քաղաքական հիմքը
կազմում են աշխատավորների պատգամա-
վորների Խորհուրդները, վորոնք աճել և ամ-
րապնդվել են կալվածատերերի ու կապի-
տալիստների իշխանութայունը տապալելու և
պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու հե-
տևանքով:

ՀՈՒՎԱԾ 3. ՌԽՖՍՀ-ում ամբողջ իշխա-
նութայունը պատկանում է քաղաքի և գյու-
ղի աշխատավորներին՝ հանձինս աշխատա-
վորների պատգամավորների Խորհուրդների:

ՀՈՒՎԱԾ 4. ՌԽՑՍՀ տնտեսական հիմքը կազմում են տնտեսության սոցիալիստական սխեման և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, վորոնք հաստատվել են տնտեսության կապիտալիստական սխեմայի լիկվիդացիայի, արտադրության գործիքների և միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարդու կողմից մարդու շահագործումը վոչնչացնելու հետևանքով:

ՀՈՒՎԱԾ 5. ՌԽՑՍՀ ում սոցիալիստական սեփականությունն ունի կամ պետական սեփականության ձև (համաժողովրդական ունեցվածք), կամ կոոպերատիվ-կոլտոգային սեփականության ձև (առանձին կոլտոգների սեփականություն, կոոպերատիվ միավորումների սեփականություն):

ՀՈՒՎԱԾ 6. Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, ֆաբրիկները, հանքահորերը, հանքերը, յերկաթուղային, ջրային և ոգային տրանսպորտը, բանկերը, կապի միջոցները, պետության կազմակերպած խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները (սովխոզները, մեքենատրակտորային կայանները և այլն), ինչպես նաև կոմունալ ձեռնարկությունները և բնակարանային հիմնական ֆոնդը քաղաքներում ու արդյունաբերական վայրերում հանդիսա-

նում են պետական սեփականություն, այսինքն համաժողովրդական ունեցվածք:

ՀՈՒՎԱԾ 7. Հանրային ձեռնարկությունները, կոլտոգներում և կոոպերատիվ կազմակերպություններում իրենց կենդանի և մեռյալ ինվենտարով, կոլտոգների և կոոպերատիվ-կազմակերպությունների կողմից արտադրվող արտադրանքը, ինչպես նաև նրանց հանրային շինությունները կազմում են կոլտոգների և կոոպերատիվ կազմակերպությունների հանրային, սոցիալիստական սեփականությունը:

Յուրաքանչյուր կոլտոգնիկի տնտեսություն, բացի կոլտոգային, հանրային տնտեսությունից ստացած հիմնական յեկամուտից, անձնական ոգտագործման համար ունի վոչ մեծ տնամերձ հողամաս և, վորպես անձնական սեփականություն՝ ոժանդակ տնտեսություն տնամերձ հողամասում, բնակելի տուն, մթերատու անասուններ, թռչուններ և գյուղատնտեսական մանր ինվենտար՝ գյուղատնտեսական արտելի կանոնադրության համաձայն:

ՀՈՒՎԱԾ 8. Կոլտոգների զբաղեցրած հողն ամրացվում է նրանց՝ տնվճար և անժամկետ ոգտագործման համար, այսինքն՝ տոհմական:

ՀՈՒՎԱԾ 9. Տնտեսության սոցիալիստական սխեմայի հետ միասին, վորը հանդիսա-

նում ե տնտեսութեան տիրապետող ձեր ՌեֆՍՅ-ում, որենքով թույլատրվում ե մե- նատնտես գյուղացիների և տնայնագործնե- րի մանր մասնավոր տնտեսութիւն, վորը հիմնված ե անձնական աշխատանքի վրա և բացառում ե ուրիշի աշխատանքի շահագոր- ծումը:

ՀՈՂՎԱԾ 10. Քաղաքացիների անձնական սեփականութեան իրավունքը՝ նրանց աշխա- տանքային լեկամուտների ու խնայողու- թյունների նկատմամբ, բնակելի տան և տնա- յին ոժանդակ տնտեսութեան նկատմամբ, տնային տնտեսութեան և առօրյա գործա- ծութեան առարկաների նկատմամբ, անձնա- կան սպառման ու հարմարութեան առար- կաների նկատմամբ, ինչպես և քաղաքացի- ների անձնական սեփականութիւնը ժառան- գելու իրավունքը պահպանվում են որեն- քով:

ՀՈՂՎԱԾ 11. ՌեֆՍՅ տնտեսական կյան- քը վորոշվում և նրան ուղղութիւն ե տրը- վում պետական ժողովրդական տնտեսական պլանով՝ հոգուտ հանրային հարստութեան ա- վելացման, աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձ- րացման, սոցիալիստական պետութեան ան- կախութեան ամրացման և նրա պաշտպա- նունակութեան ուժեղացման:

ՀՈՂՎԱԾ 12. ՌեֆՍՅ-ում աշխատանքը հանդիսանում ե լուրջքանչյուր աշխատունակ քաղաքացու պարտականութիւնը և պատվի գործը՝ «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքի համաձայն:

ՌեֆՍՅ-ում իրականացվում ե սոցիալիզ- մի սկզբունքը՝ «յուրաքանչյուրից — ըստ նրա ընդունակութիւնների, յուրաքանչյուրին — ըստ նրա աշխատանքի»:

ԳԼՈՒԽ II.

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՈՂՎԱԾ 13. Տնտեսական և քաղաքական գծով, ինչպես նաև պաշտպանութեան գծով փոխադարձ ոգնութիւնն իրականացնելու նպատակով Ռուսաստանի Խորհրդային Ֆե- դերատիվ Սոցիալիստական Հանրապետու- թիւնը կամավոր կերպով միանալով իրավա- փոխադարձ ոգնութիւնն իրականացնելու նպատակով Ռուսաստանի Խորհրդային Ֆե- դերատիվ Սոցիալիստական Հանրապետութիւններին՝ Ուկրաինական ԽՍՀ, Բելոռուսական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ, Վրացական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ, Թուրք- մենական ԽՍՀ, Ուզբեկական ԽՍՀ, Տաճիկա- կան ԽՍՀ, Ղազախական ԽՍՀ, Կիրգիզական ԽՍՀ հետ — կազմել ե միութենական պետու- թիւն — Խորհրդային Սոցիալիստական Հան- րապետութիւնների Միութիւն:

Յենեկով դրանից, ՌԽՖՍՀ վերապահում ե
ԽՍՀՄ-ին՝ հանձին նրա իշխանության գե-
րագույն մարմինների և պետական կառա-
վարման մարմիններին՝ այն իրավունքները,
վորոնք վորոշված են ԽՍՀՄ Սահմանադրու-
թյան 14-րդ հոդվածով:

ԽՍՀՄ-ի Սահմանադրության 14-րդ հոդ-
վածի սահմաններից զուրս ՌԽՖՍՀ պետա-
կան իշխանությունն իրագործում ե ինք-
նուրույնաբար, լիովին պահպանելով իր սու-
վերեն իրավունքները:

ՀՈՒՎԱԾ 14. Ռուսաստանի Խորհրդային
Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետու-
թյունը կազմված ե Ազով-Սևծովյան, Հեռա-
վոր-Արևելյան, Արևմտյան Սիբիրի, Կրասնո-
յարսկի, Հյուսիսային Կովկասյան յերկրա-
մասերից, Վորոնեժի, Արևելյան Սիբիրի, Գոր-
կու, Արևմտյան, Իվանովյան, Կալինինի, Կի-
րովի, Կուլբիչևի, Կուրսկի, Լենինգրադի,
Մոսկվայի, Ոմսկի, Որենբուգի, Սարատովի,
Սվերդլովսկի, Հյուսիսային, Ստալինգրադի,
Չելյաբինսկի, Ֆարուսավի մարզերից, Թա-
թարական, Բաշկիրյան, Բուրյատ-Մոնղոլա-
կան, Դաղստանի, Կաբարդինո-Բալկարիայի,
Կալմիկյան, Կարելյան, Կոմիի, Ղրիմի, Մա-
րիյական, Մորդովական, Մերձվոլգյան գեր-
մանացիների, Հյուսիս-Ոսեթական, Ուլժմուր-
տական, Չեչենո-Խնգուզական, Չուվաշական,

Յակուտական ինքնավար խորհրդային սո-
ցիալիստական հանրապետություններից և
Ադիգեյի, Հրեական, Կարաչայի, Ոյրոտա-
կան, Խակասական, Չերքեսական ինքնավար
մարզերից:

ՀՈՒՎԱԾ 15. Ռուսաստանի Խորհրդային
Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապե-
տությունն իրավունք ե վերապահում իրեն՝
զուրս գալու Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետությունների Միությունից:

ՀՈՒՎԱԾ. 16. ՌԽՖՍՀ տերիտորիան չի
կարող փոփոխվել՝ առանց ՌԽՖՍՀ համա-
ձայնության:

ՀՈՒՎԱԾ 17. ԽՍՀՄ որենքները պարտա-
դիր են ՌԽՖՍՀ տերիտորիայում:

ՀՈՒՎԱԾ 18. ՌԽՖՍՀ յուրաքանչյուր քա-
ղաքացի հանդիսանում ե ԽՍՀՄ քաղաքացի:

Մյուս բոլոր միութենական հանրապետու-
թյունների քաղաքացիները ՌԽՖՍՀ տերիտո-
րիայում միատեսակ իրավունքներով են ոգրտ-
վում ՌԽՖՍՀ քաղաքացիներին հետ միա-
սին:

ՀՈՒՎԱԾ 19. Ռուսաստանի Խորհրդային
Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետու-
թյան տնորինությունը, հանձին նրա իշխա-
նության բարձրագույն մարմինների և պե-
տական կառավարման մարմինների յենթա-
կա յեն.

ա) ՌԽՖՍՀ Սահմանադրության սահմանումը և նրա կատարման վերահսկողությունը.

բ) ինքնավար խորհրդային սոցիալիստական հանրապետությունների սահմանադրությունների հաստատումը.

գ) ՌԽՖՍՀ-ի կազմի մեջ նոր յերկրամասերի ու մարզերի, ինչպես նաև նոր ինքնավար հանրապետությունների և մարզերի կազմումը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հաստատման ներկայացնելը.

դ) ինքնավար խորհրդային սոցիալիստական հանրապետությունների և ինքնավար մարզերի սահմանների և ռայոնական բաժանման հաստատումը.

ե) յերկրամասերի և մարզերի սահմանների և ռայոնական բաժանման սահմանումը.

զ) ՌԽՖՍՀ որենսդրությունը.

է) պետական կարգի և քաղաքացիների իրավունքների պահպանությունը.

ը) ՌԽՖՍՀ ժողովրդա-տնտեսական պլանի հաստատումը.

թ) ՌԽՖՍՀ պետական բյուջեյի հաստատումը.

ժ) ԽՍՀՄ որենսդրության համապատասխան պետական և տեղական հարկերի, գանձումների և վոչ հարկային յեկամությունների սահմանումը.

ժա) ինքնավար հանրապետությունների բյուջեների և յերկրամասերի ու մարզերի տեղական բյուջեների իրագործման ղեկավարումը.

ժբ) ապահովագրական և խնայողական գործի ղեկավարումը.

ժգ) հանրապետության յինթակա բանկերի, արդյունաբերական, գյուղատնտեսական և առևտրական ձեռնարկությունների ու կազմակերպությունների, ինչպես նաև տեղական արդյունաբերության ղեկավարումը.

ժդ) Միություն յինթակա ձեռնարկությունների ղրություն ու կառավարման հսկողությունը և վերահսկողությունը.

ժե) յողերի, ընդերքների, անտառների և ջրերի ոգտագործման կարգի սահմանումը.

ժզ) բնակարանային ու կոմունալ տնտեսության, բնակարանային շինարարության և քաղաքների ու այլ բնակելի վայրերի բարեկարգության ղեկավարումը.

ժէ) ճանապարհային շինարարությունը, տեղական տրանսպորտի և կապի ղեկավարումը.

ժզ) աշխատանքի վերաբերյալ որենսդրությունը.

ժթ) առողջապահության գործի ղեկավարումը.

ի) սոցիալական ապահովության գործի ղեկավարումը.

իա) նախնական, միջին և բարձրագույն
Վրթուլթյան ղեկավարումը.

իբ) ՌեֆՍՆ-ի կուլտուր-լուսավորական և
գիտական կազմակերպությունների ու հիմ-
նարկների ղեկավարումը և ընդհանուր հան-
րապետական նշանակություն ունեցող կուլ-
տուր-լուսավորական և գիտական կազմա-
կերպությունների ու հիմնարկների կառա-
վարումը.

իգ) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
գործի ղեկավարումն ու կազմակերպումը.

իդ) ՌեֆՍՆ զատական մարմինների կազ-
մակերպումը.

իե) ՌեֆՍՆ քաղաքացիության իրավունք-
ներ տալը.

իզ) ՌեֆՍՆ զատական մարմինների կող-
մից զատապարտված քաղաքացիների ամիս-
տիան և ներումը.

ՀՈՒՎԱԾ 20. Յուրաքանչյուր Ինքնավար
հանրապետություն ունի իր Սահմանադրու-
թյունը, վորը հաշվի յե առնում Ինքնավար
հանրապետության առանձնահատկություն-
ները և կառուցված է ՌեֆՍՆ Սահմանա-
դրությանը և ԽՍՀՄ Սահմանադրությանը
լիովին համապատասխան:

ՀՈՒՎԱԾ 21. ՌեֆՍՆ որենքները պարտա-
դիր են Ինքնավար հանրապետության տե-
րիտորիայում: Այն ղեկըրում, յերբ Ինքնա-

վար հանրապետության որենքի և ՌեֆՍՆ
որենքի մեջ և տարակարծություն լինի, գոր-
ծում է ՌեֆՍՆ որենքը:

ԳԼՈՒԽ III.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈՒՎԱԾ 22. ՌեֆՍՆ պետական իշխա-
նության բարձրագույն մարմինը հանդիսա-
նում է ՌեֆՍՆ Գերագույն Խորհուրդը:

ՀՈՒՎԱԾ 23. ՌեֆՍՆ Գերագույն Խոր-
հուրդն իրագործում է՝ ՌեֆՍՆ Սահմանա-
դրության 13-րդ և 19-րդ հոդվածների հա-
մաձայն ՌեֆՍՆ վերապահված բոլոր իրա-
վունքները, ինչ չափով վոր նրանք՝ ըստ
Սահմանադրության՝ չեն մոռնում ՌեֆՍՆ
Գերագույն Խորհրդին հաշվետու մարմին-
ների՝ ՌեֆՍՆ Գերագույն Խորհրդի նախա-
գահության, ՌեֆՍՆ Ժողովրդական Կոմի-
սարներին Խորհրդի և ՌեֆՍՆ Ժողովրդական
Կոմիսարիատների իրավասության մեջ:

ՀՈՒՎԱԾ 24. ՌեֆՍՆ Գերագույն Խոր-
հուրդը հանդիսանում է ՌեֆՍՆ միակ որենս-
դիր մարմինը:

ՀՈՒՎԱԾ 25. ՌԽՑՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրվում է ՌԽՑՍՀ քաղաքացիներին կողմից ըստ ընտրական ոկրուգների 4 տարվա ժամկետով՝ 150 հազար բնակչի համար մի պատգամավորի նորմայով:

ՀՈՒՎԱԾ 26. Որենքը հաստատված է համարվում, յեթե նա ընդունված է ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի կողմից ձայների հասարակ մեծամասնությամբ:

ՀՈՒՎԱԾ 27. ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի ընդունած որենքները հրապարակվում են ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի և քարտուղարի ստորագրություներով:

ՀՈՒՎԱԾ 28. ՌԽՑՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրում է ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի նախագահին և նրա յերկու տեղակալներին:

ՀՈՒՎԱԾ 29. ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի նախագահը ղեկավարում է ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի նիստերը և տնօրինում է նրա ներքին կարգ ու կանոնը:

ՀՈՒՎԱԾ 30. ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանները հրավիրվում են ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից տարին յերկու անգամ:

Արտակարգ նստաշրջանները հրավիրվում են ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի Նախագա-

հուծյան կողմից իր հայեցողությամբ կամ Գերագույն Խորհրդի պատգամավորների մի յերրորդի պահանջով:

ՀՈՒՎԱԾ 31. ՌԽՑՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրում է ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հետևյալ կազմով՝ ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ, նրա 17 տեղակալներ ըստ ինքնավար հանրապետությունների թվի, Նախագահության քարտուղար և Նախագահության 20 անդամներ:

ՀՈՒՎԱԾ 32. ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունն իր ամբողջ գործունեության համար հաշվետու յե ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդին:

ՀՈՒՎԱԾ 33. ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը՝

ա) հրավիրում է ՌԽՑՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանները:

բ) տալիս է ՌԽՑՍՀ որենքների մեկնաբանությունը, հրատարակում է հրամանագրեր:

գ) կատարում է համաժողովրդական հարցում (ռեֆերենդում):

դ) բեկանում է ՌԽՑՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհրդի, ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհուրդների, ինչպես նաև աշխատավորների պատգամավորների, յերկրային

(մարզային) խորհուրդների և աշխատավոր-
ների պատգամավորների ինքնավար մար-
զերի խորհուրդների վորտչումները և կար-
գադրությունները — որենքին անհամապա-
տասխան լինելու դեպքում:

ե) ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի նստա-
շրջանների միջև ընկած ժամանակաշրջանում
պաշտոնից ազատում և նշանակում է ՌԽՖՍՀ
առանձին ժողովրդական կոմիսարներին՝
ՌԽՖՍՀ ժողովրդական կոմիսարների խոր-
հրդի նախագահի առաջադրմամբ, հետագա-
յում ներկայացնելով ՌԽՖՍՀ Գերագույն
խորհրդի հաստատմանը:

զ) տալիս է ՌԽՖՍՀ պատվավոր կոչումներ:

է) իրականացնում է ՌԽՖՍՀ դատական
մարմինների կողմից դատապարտված քաղա-
քացիների ներման իրավունքը:

ՀՈՒՎԱԾ 54. ՌԽՖՍՀ Գերագույն խոր-
հուրդն ընտրում է մանդատային հանձնա-
ժողով, վորն ստուգում է ՌԽՖՍՀ Գերա-
գույն խորհրդի պատգամավորների լիազո-
րությունները:

Մանդատային հանձնաժողովի առաջադր-
մամբ ՌԽՖՍՀ Գերագույն խորհուրդը վորո-
շում է կամ ճանաչել լիազորությունները,
կամ բեկանել առանձին պատգամավորների
ընտրությունները:

ՀՈՒՎԱԾ 35. ՌԽՖՍՀ Գերագույն խոր-

հուրդը, յերբ նա անհրաժեշտ գտնի, նշանա-
կում է քննիչ և վեշտուղիչ հանձնաժողով-
ներ ամեն մի հարցի առթիվ:

Բոլոր հիմնարկները և պաշտոնատար ան-
ձինք պարտավոր են կատարելու այդ հանձնա-
ժողովների պահանջները և ներկայացնել նը-
րանց անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր:

ՀՈՒՎԱԾ 36. ՌԽՖՍՀ Գերագույն խոր-
հրդի պատգամավորը չի կարող դատական
պատասխանատվության յենթարկվել կամ
ձերբակալվել առանց ՌԽՖՍՀ Գերագույն
խորհրդի համաձայնություն, իսկ ՌԽՖՍՀ Գե-
րագույն խորհրդի նստաշրջանների միջև ըն-
կած ժամանակամիջոցում, — առանց ՌԽՖՍՀ
Գերագույն խորհրդի նախագահության հա-
մաձայնություն:

ՀՈՒՎԱԾ 37. ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի
լիազորությունները լրանալուց հետո ՌԽՖՍՀ
Գերագույն խորհրդի նախագահությունը նոր
ընտրություններ և նշանակում ՌԽՖՍՀ Գե-
րագույն խորհրդի լիազորությունների լրա-
նալու որից յերկու ամսից վոչ ավելի ժամ-
կետում:

ՀՈՒՎԱԾ 38. ՌԽՖՍՀ Գերագույն խոր-
հրդի լիազորությունները լրանալուց հե-
տո ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի նախագահու-
թյունը պահպանում է իր լիազորություն-
ները մինչև ՌԽՖՍՀ նորոշման Գերագույն



Խորհրդի կողմից ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի նոր Նախագահության կազմվելը:

ՀՈՒՎԱԾ 39. ՌԽՖՍՀ նորընտիր Գերագույն Խորհուրդը հրավիրվում է ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի նախորդ գումարման նախագահության կողմից՝ վոչ ուշ, քան ընտրություններից մի ամիս հետո:

ՀՈՒՎԱԾ 40. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհուրդը կազմում է ՌԽՖՍՀ Կառավարությունը — ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ:

ԳԼՈՒԽ IV.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈՒՎԱԾ 41. ՌԽՖՍՀ պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը հանդիսանում է ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը:

ՀՈՒՎԱԾ 42. ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պատասխանատու չէ ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի առաջ և հաշվետու չէ նրան, իսկ ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակամիջոցում — ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության առաջ, վորին հաշվետու չէ:

ՀՈՒՎԱԾ 43. ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հրատարակում է վորոշումներ և կարգադրություններ՝ ԽՍՀՄ և ՌԽՖՍՀ որենքների, ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումների և կարգադրությունների հիման վրա և ի կատարումն նրանց, ու ստուգում է նրանց կատարումը:

ՀՈՒՎԱԾ 44. ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների կատարումը պարտադիր է ՌԽՖՍՀ ամբողջ տերիտորիայում:

ՀՈՒՎԱԾ 45. ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը՝

ա) միավորում և ուղղություն է տալիս ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների ու նրա գերատեսչությանը յենթակատնտեսական և կուլտուրական հիմնարկների աշխատանքին. միավորում և ստուգում է համամիութենական Ժողովրդական Կոմիսարիատների լիազորների աշխատանքը:

բ) միջոցներ է ձեռք առնում Ժողովրդատնտեսական պլանի իրագործման համար:

գ) միջոցներ է ձեռք առնում ՌԽՖՍՀ պետական և տեղական բյուջեների իրագործման համար:

դ) միջոցներ է ձեռք առնում հասարակական կարգն ապահովելու, պետական շա-

հերը պաշտպանելու և քաղաքացիների իրավունքները պահպանելու համար.

ե) ուղղութիւնն է տալիս և ստուգում է ինքնավար հանրապետութիւնների ժողովրդական Կոմիսարների խորհուրդների աշխատանքը, ղեկավարում և ստուգում է աշխատավորների պատգամավորների խորհուրդների յերկրային և մարզային գործադիր կոմիտեների աշխատանքը.

զ) անհրաժեշտութեան դեպքում ՌԽՖՍՀ ժողովրդական Կոմիսարների խորհրդին կից կազմում է տնտեսական և կուլտուրական շինարարութեան գործերի վերաբերյալ հատուկ կոմիտեներ և Գլխավոր Վարչութիւններ:

ՀՈԴՎԱԾ 46. ՌԽՖՍՀ ժողովրդական Կոմիսարների խորհուրդն իրավունք ունի վերացնել աշխատավորների պատգամավորների խորհուրդների յերկրային և մարզային գործադիր կոմիտեների և ինքնավար մարզերի աշխատավորների պատգամավորների խորհուրդների գործադիր կոմիտեների վորոշումներն ու կարգադրութիւնները, ինչպես նաև դադարեցնել ինքնավար հանրապետութիւնների ժողովրդական Կոմիսարների խորհուրդների վորոշումներն ու կարգադրութիւնները, աշխատավորների պատգամավորների մարզային խորհուրդների և ինքնավար մարզերի աշխատավորների պատգամավորների

խորհուրդների վորոշումները և կարգադրութիւնները:

ՌԽՖՍՀ ժողովրդական Կոմիսարների խորհուրդն իրավունք ունի վերացնել ՌԽՖՍՀ ժողովրդական Կոմիսարների հրամաններն ու հրահանգները:

ՀՈԴՎԱԾ 47. ՌԽՖՍՀ ժողովրդական Կոմիսարների խորհուրդը կազմվում է ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի կողմից հետեյալ կազմով. ՌԽՖՍՀ ժողովրդական Կոմիսարների խորհրդի Նախագահ,

ՌԽՖՍՀ ժողովրդական Կոմիսարների խորհրդի Նախագահի տեղակալներ,

ՌԽՖՍՀ Պետական Պլանային Հանճնաժողովի նախագահ,

ՌԽՖՍՀ ժողովրդական Կոմիսարներ՝

Սննդային արդյունաբերութեան,

Թեթև արդյունաբերութեան,

Անտառային արդյունաբերութեան,

Հողագործութեան,

Հացահատիկային և անասնապահական սովխոզներ,

Ֆինանսների,

Ներքին առևտրի,

Ներքին գործերի,

Արդարադատութեան,

Առողջապահութեան,

Հուսավորութեան,

Տեղական արդյունաբերության,
կոմունալ տնտեսության,
Սոցիալական ապահովության,
ԽՍՀՄ Մթերութեանների կոմիտեյի լիազոր,
Արվեստի գործերի վարչության պետ,
Ընդհանուր միութենական ժողովրդա-
կան կոմիսարների լիազորներ:

ՀՈՒՎԱԾ 48. ՌԽՖՍՀ կառավարությունը
կամ ՌԽՖՍՀ այն ժողովրդական կոմիսարը,
վորին ուղղված է ՌԽՖՍՀ Գերագույն Խոր-
հրդի պատգամավորի հարցապնդումը, պար-
տավոր են վոչ ուշ, քան յեռորյա ժամկե-
տում բերանացի կամ գրավոր պատասխան
տալ ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդում:

ՀՈՒՎԱԾ 49. ՌԽՖՍՀ ժողովրդական կո-
միսարները ղեկավարում են պետական կա-
ռավարման այն ճյուղերը, վորոնք մտնում
են ՌԽՖՍՀ իրավասության մեջ:

ՀՈՒՎԱԾ 50. ՌԽՖՍՀ ժողովրդական կո-
միսարները համապատասխան ժողովրդական
կոմիսարիատներ իրավասության սահման-
ներում հրատարակում են հրամաններ և
հրահանգներ՝ ԽՍՀՄ և ՌԽՖՍՀ որենքների,
ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խոր-
հրդի և ՌԽՖՍՀ ժողովրդական կոմիսարների
Խորհրդի վորոշումների ու կարգադրու-
թյունների, ԽՍՀՄ միութենական-հանրապետական
ժողովրդական կոմիսարիատների հրամաններ:

րի, հրահանգների հիման վրա և ի կատարումն
նրանց, ու ստուգում են նրանց կատարումը:

ՀՈՒՎԱԾ 51. ՌԽՖՍՀ ժողովրդական կո-
միսարիատները հանդիսանում են կամ միու-
թենական-հանրապետական կամ հանրապե-
տական:

ՀՈՒՎԱԾ 52. ՌԽՖՍՀ միութենական-հան-
րապետական ժողովրդական կոմիսարիատ-
ները ղեկավարում են նրանց հանձնված
ՌԽՖՍՀ պետական կառավարման ճյուղերը,
բացառությամբ միայն սահմանափակ թվով
ձեռնարկությունների, ըստ այն ցուցակի,
վորը հաստատում է ԽՍՀՄ Գերագույն Խոր-
հրդի Նախագահությունը, յենթարկվելով Թե
ՌԽՖՍՀ ժողովրդական կոմիսարների Խոր-
հրդին և Թե ԽՍՀՄ համապատասխան միու-
թենական-հանրապետական ժողովրդական
կոմիսարիատներին:

ՀՈՒՎԱԾ 53. ՌԽՖՍՀ հանրապետական
ժողովրդական կոմիսարիատները ղեկավա-
րում են նրանց հանձնված պետական կա-
ռավարման ճյուղերը, անմիջականորեն յեն-
թարկվելով ՌԽՖՍՀ ժողովրդական կոմի-
սարների Խորհրդին:

ՀՈՒՎԱԾ 54. ՌԽՖՍՀ միութենական-հան-
րապետական ժողովրդական կոմիսարիատ-
ներին պատկանում են ՌԽՖՍՀ հետևյալ ժո-
ղովրդական կոմիսարիատները՝

Մենդային արդյունաբերության,
 Թեթև արդյունաբերության,
 Անտառային արդյունաբերության,
 Հողագործության,
 Հացահատիկային և անասնապահական
 սովխոզների,
 Ֆինանսների,
 Ներքին առևտրի,
 Ներքին գործերի,
 Արդարադատության,
 Առողջապահության:

ՀՈՂՎԱԾ 55. Հանրապետական Ժողովրդ-
 փական Կոմիսարիատներին պատկանում են
 ՌԽՖՍՀ հետևյալ Ժողովրդական Կոմիսա-
 րիատները՝

Հոսսավորության,
 Տեղական արդյունաբերության,
 Կոմունալ տնտեսության,
 Սոցիալական ապահովության:

ԳԼՈՒԽ V.

ԻՆՔՆԱՎԱՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
 ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ
 ՀՈՂՎԱԾ 56. Ինքնավար հանրապետու-
 թյան պետական իշխանության բարձրա-
 գույն մարմինը հանդիսանում է ԻԽՍՀ Գե-
 րագույն Խորհուրդը:

ՀՈՂՎԱԾ 57. Ինքնավար հանրապետու-
 թյան Գերագույն Խորհուրդն ընտրվում է
 հանրապետության քաղաքացիների կողմից
 4 տարով՝ ներկայացուցչության այն նոր-
 մաներով, վորոնք սահմանվում են Ինքնավար
 հանրապետության Սահմանադրությամբ:

ՀՈՂՎԱԾ 58. Ինքնավար հանրապետու-
 թյան Գերագույն Խորհուրդը հանդիսանում
 է ԻԽՍՀ միակ որենտդիր մարմինը:

ՀՈՂՎԱԾ 59. Ինքնավար հանրապետու-
 թյան Գերագույն Խորհուրդը՝

ա) ընդունում է Ինքնավար հանրապե-
 տության Սահմանադրությունը և ներկա-
 յացնում է այն ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի
 հաստատմանը:

բ) սահմանում է Ինքնավար հանրապե-
 թյան ռալյոնական բաժանումը և ռալյոն-
 ների ու քաղաքների սահմանները և ներ-
 կայացնում է ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի
 հաստատմանը:

գ) հաստատում է Ինքնավար հանրապե-
 տության Ժողովրդա-տնտեսական պլանը և
 բյուջեն:

դ) տալիս է Ինքնավար հանրապետու-
 թյան պատվավոր կոչումներ:

ՀՈՂՎԱԾ 60. Ինքնավար հանրապետու-
 թյան Գերագույն Խորհուրդն ընտրվում է
 ԻԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահու-

Թյուն հետեյալ կազմով. ԻԽՍՀ Գերագույն
Խորհրդի Նախագահության նախագահ, նրա
տեղակալներ, նախագահության քարտու-
ղար և ԻԽՍՀ Գերագույն Խորհրդի նախա-
գահության անդամներ:

ՀՈՒՎԱԾ 61. Ինքնավար հանրապետության
Գերագույն Խորհրդի Նախագահությունը հաշ-
վետու յե ԻԽՍՀ Գերագույն Խորհրդին:

ՀՈՒՎԱԾ 62. Ինքնավար հանրապետու-
թյան Գերագույն Խորհրդի Նախագահու-
թյան լիազորությունները սահմանվում են
ԻԽՍՀ Սահմանադրությամբ:

ՀՈՒՎԱԾ 63. Նիստերը վարելու համար
Ինքնավար հանրապետության Գերագույն
Խորհուրդն ընտրում է ԻԽՍՀ Գերագույն Խոր-
հրդի նախագահին և նրա տեղակալներին:

ՀՈՒՎԱԾ 64. Ինքնավար հանրապետու-
թյան Գերագույն Խորհուրդը կազմում է Ինք-
նավար հանրապետության կառավարու-
թյուն — ԻԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների
Խորհուրդ:

ԳԼՈՒԽ VI.

ԻՆՔՆԱՎԱՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՍԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈՒՎԱԾ 65. ԻԽՍՀ պետական իշխանու-
թյան բարձրագույն գործադիր և կարգա-

դրիչ մարմին հանդիսանում է ԻԽՍՀ Ժո-
ղովրդական Կոմիսարների Խորհուրդը:

ՀՈՒՎԱԾ 66. Ինքնավար Հանրապետու-
թյան Ժողովրդական Կոմիսարների Խոր-
հուրդը պատասխանատու յե ԻԽՍՀ Գերա-
գույն Խորհրդի առաջ և նրան հաշվետու
յե, իսկ Ինքնավար հանրապետության Գե-
րագույն Խորհրդի նստաշրջանների միջև ըն-
կած ժամանակամիջոցում — Ինքնավար հան-
րապետության Գերագույն Խորհրդի Նախա-
գահության առաջ, վորին հաշվետու յե:

ՀՈՒՎԱԾ 67. Ինքնավար հանրապետու-
թյան Ժողովրդական Կոմիսարների Խոր-
հուրդը հրատարակում է վորոշումներ և կար-
գադրություններ ԽՍՀՄ, ՌԽՖՍՀ և Ինքնա-
վար հանրապետության որենքների, ԽՍՀՄ
և ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խոր-
հուրդների վորոշումների ու կարգադրու-
թյունների հիման վրա և ի կատարումն
նրանց, ու ստուգում է նրանց կատա-
րումը:

ՀՈՒՎԱԾ 68. Ինքնավար հանրապետու-
թյան Ժողովրդական Կոմիսարների Խոր-
հուրդն իրավունք ունի վերացնելու ԻԽՍՀ
Ժողովրդական Կոմիսարների հրամաններն
ու հրահանգները, աշխատավորների պատ-
գամավորների շրջանային, քաղաքային ու
ռայոնական Խորհուրդների գործադիր կոմի-

տենների վորոշումներն ու կարգադրություններն ԻԽՍՀ տերիտորիայում, ինչպես նաև դադարեցնելու աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային և ռայոնական Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները:

ՀՈՒՎԱԾ 69. Ինքնավար հանրապետության ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կազմվում է Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից հետևյալ կազմով.

Ինքնավար հանրապետության ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ,

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալներ,

Պետական պլանային հանձնաժողովի նախագահ,

Ժողովրդական կոմիսարներ՝

Հողագործության,

Ֆինանսների,

Ներքին առևտրի,

Ներքին գործերի,

Արդարադատության,

Առողջապահության

Լուսավորության,

Տեղական արդյունաբերության,

Կոմունալ տնտեսության,

Սոցիալական ապահովության,

Ճանապարհային վարչության պետ,
Մթերութիւնների կոմիտեյի լիազոր,
Արվեստի գործերի վարչության պետ,
և, բացի զրանից, հանրապետության տրնտեսության առանձնահատկություններին համապատասխանորեն, ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի հաստատմամբ — Ժողովրդական Կոմիսարներ՝

Մանդային արդյունաբերության,

Թեթև արդյունաբերության,

Անտառային արդյունաբերության:

ՀՈՒՎԱԾ 70. Ինքնավար հանրապետության ժողովրդական Կոմիսարները ղեկավարում են պետական կառավարման այն ճյուղերը, վորոնք մտնում են Ինքնավար հանրապետության իրավասության մեջ ՌԽՖՍՀ և ԻԽՍՀ Սահմանադրությունների համաձայն:

ՀՈՒՎԱԾ 71. Ինքնավար հանրապետության ժողովրդական Կոմիսարները համապատասխան ժողովրդական Կոմիսարիատների իրավասության սահմաններում հրատարակում են հրամաններ ու հրահանգներ՝ ԽՍՀՄ, ՌԽՖՍՀ և ԻԽՍՀ որենքների, ԽՍՀ Մ, ՌԽՖՍՀ և ԻԽՍՀ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների, ՌԽՖՍՀ ժողովրդական Կոմիսարների հրամանների ու հրահանգների հիման վրա և ի կատարումն նրանց:

ՀՈՂՎԱԾ 72. Ինքնավար հանրապետու-
թյան Ժողովրդական Կոմիսարիատները ղե-
կավարում են նրանց հանձնարարված պե-
տական կառավարման ճյուղերը, յենթարկ-
վելով թե՛ ԻԽՍՀ Ժողովրդական Կոմիսար-
ների Խորհրդին և թե՛ ՌԽՖՍՀ համապա-
տասխան Ժողովրդական Կոմիսարիատնե-
րին:

ԳԼՈՒԽ VII.

ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒ- ԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 73. Ինքնավար մարզի պետա-
կան իշխանություն մարմինը հանգիստանում
է ինքնավար մարզի աշխատավորների պատ-
գամավորների Խորհուրդը:

ՀՈՂՎԱԾ 74. Ինքնավար մարզի աշխա-
տավորների Խորհուրդն ընտրվում է Ինք-
նավար մարզի քաղաքացիների կողմից յերկու
տարի ժամանակով՝ ներկայացուցչության
այն նորմաներով, վորոնք սահմանվում են
ՌԽՖՍՀ Սահմանադրությամբ:

ՀՈՂՎԱԾ 75. Ինքնավար մարզերի աշ-
խատավորների պատգամավորների Խորհրդի
գործադիր և կարգադիր մարմինը հանդիսա-
նում է նրա կողմից ընտրվող գործադիր կո-
միտեն:

ՀՈՂՎԱԾ 76. Յուրաքանչյուր Ինքնավար
մարզի աշխատավորների պատգամավորների
Խորհուրդ ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի հաս-
տատմանն են ներկայացնում «Ինքնավար մար-
զի Կանոնադրությունը», վորը հաշվի յե առ-
նում Ինքնավար մարզի ազգային առանձ-
նահատկությունները:

ԳԼՈՒԽ VIII.

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 77. Յերկրամասերում, մարզե-
րում, ինքնավար մարզերում, ազգային շր-
ջաններում, վարչական շրջաններում, ռայոն-
ներում, քաղաքներում, ավաններում, գյու-
ղերում (ստանիցաներում, գյուղակներում,
խուտորներում, աուլներում) պետական իշ-
խանություն մարմիններ հանդիսանում են աշ-
խատավորների պատգամավորների Խորհուրդ-
ները:

ՀՈՂՎԱԾ 78. Աշխատավորների պատգա-
մավորների յերկրային, մարզային Խոր-
հուրդները, ազգային և վարչական շրջան-
ների աշխատավորների պատգամավորների
Խորհուրդները, աշխատավորների պատգա-
մավորների ռայոնական, քաղաքային, խոշոր
քաղաքների ռայոնական, ավանների, գյու-
ղական (ստանիցաների, գյուղակների, խու-

տորներին, առւելներին) Խորհուրդները համապատասխան կերպով ընտրվում են յերկրամասի, մարզի, ազգային շրջանի, վարչական շրջանի, ռայոնի, քաղաքի, գյուղի աշխատավորների կողմից յերկու տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 79. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդները (յերկրամասի, մարզի, շրջանի, ռայոնի, քաղաքի, ավանի, գյուղի) ղեկավարում են իրենց տերիտորիայում կուլտուր-քաղաքական և տնտեսական շինարարությունը, սահմանում են տեղական բյուջեն, ղեկավարում են իրենց կառավարման յենթակա մարմինների գործունեությունը, ապահովում են պետական կարգի պահպանումը, աջակցում են յերկրի պաշտպանունակության ուժեղացմանը, ապահովում են որենքների հսկողությունը և քաղաքացիների իրավունքների պահպանումը:

ՀՈՒՎԱԾ 80. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդներն ընդունում են վորոշումներ և տալիս են կարգադրություններ այն իրավունքների սահմաններում, վորոնք տրված են նրանց՝ ԽՍՀՄ, ՌԽՖՍՀ և Ինքնավար հանրապետության որենքներով:

ՀՈՒՎԱԾ 81. Աշխատավորների պատգամավորների յերկրային, մարզային Խոր-

հուրդների, ազգային և վարչական շրջանների աշխատավորների պատգամավորների Խորհուրդների, աշխատավորների պատգամավորների ռայոնական, քաղաքային և գյուղական Խորհուրդների գործադիր և կարգադիր մարմիններ հանդիսանում են նրանց ընտրած գործադիր կոմիտեները հետեյալ կազմով՝ նախագահ, նրա տեղակալներ, քարտուղար և անդամներ:

ՀՈՒՎԱԾ 82. Վոչ մեծ ընակավայրերում աշխատավորների պատգամավորների գյուղական (ստանիցաների, խուտորների, աուլների) Խորհուրդների գործադիր և կարգադիր մարմին հանդիսանում են նրանց ընտրած նախագահը, նրա տեղակալը և քարտուղարը:

ՀՈՒՎԱԾ 83. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդներին գործադիր կոմիտեները (յերկրամասի, մարզի, շրջանի, ռայոնի, քաղաքի, ավանի, գյուղի) կուլտուրական-քաղաքական և տնտեսական շինարարության ղեկավարումն իրենց տերիտորիայում իրագործում են աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդների և վերադաս պետական մարմինների վորոշումների հիման վրա:

ՀՈՒՎԱԾ 84. Աշխատավորների պատգամավորների յերկրային և մարզային Խոր-

հուրդների նստաշրջանները հրավիրվում են նրանց գործադիր կոմիտեների կողմից տարեկան առնվազն չորս անգամ:

ՀՈՒՎԱԾ 85. Աշխատավորների պատգամավորների ռայոնական խորհուրդների և վարչական շրջանների աշխատավորների պատգամավորների խորհուրդների նստաշրջանները հրավիրվում են նրանց գործադիր կոմիտեների կողմից տարեկան առնվազն վեց անգամ:

ՀՈՒՎԱԾ 86. Աշխատավորների պատգամավորների քաղաքային և գյուղական խորհուրդների նստաշրջանները հրավիրվում են նրանց գործադիր մարմինների կողմից ամսվա մեջ առնվազն մի անգամ:

ՀՈՒՎԱԾ 87. Աշխատավորների պատգամավորների յերկրային, մարզային խորհուրդները, ավգային և վարչական շրջանների աշխատավորների պատգամավորների խորհուրդները, աշխատավորների պատգամավորների ռայոնական և քաղաքային խորհուրդներն իրենց նստաշրջանների ժամանակ ընտրում են նախագահ և քարտուղար՝ նստաշրջանի նիստերը վարելու համար:

ՀՈՒՎԱԾ 88. Գյուղական խորհրդի նախագահը հրավիրում է գյուղական խորհուրդ և վարում է նրա նիստերը:

ՀՈՒՎԱԾ 89. Աշխատավորների պատգա-

մավորների խորհուրդների գործադիր մարմիններն անմիջականորեն հաշվետու յեն թե նրանց ընտրող աշխատավորների պատգամավորների խորհրդին և թե աշխատավորների պատգամավորների վերադաս խորհրդի գործադիր մարմին:

ՀՈՒՎԱԾ 90. Աշխատավորների պատգամավորների խորհուրդների վերադաս գործադիր կոմիտեներն իրավունք ունեն վերացնելու ստորադաս գործադիր կոմիտեների վորոշումներն ու կարգադրությունները և դադարեցնելու աշխատավորների պատգամավորների ստորադաս խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները:

ՀՈՒՎԱԾ 91. Աշխատավորների պատգամավորների վերադաս խորհուրդներն իրավունք ունեն վերացնելու աշխատավորների պատգամավորների ստորադաս խորհուրդների և նրանց գործադիր կոմիտեների վորոշումներն ու կարգադրությունները:

ՀՈՒՎԱԾ 92. Աշխատավորների պատգամավորների յերկրային (մարզային) խորհուրդները կազմում են գործադիր կոմիտեների հետևյալ բաժինները.

հոգային,
ֆինանսական,
ներքին առևտրի,
առողջապահության,

Ժողովրդական կրթության,
տեղական արդյունաբերության,
կոմունալ տնտեսության,
սոցիալական ապահովության,
ճանապարհային,
ընդհանուր,
արվեստի գործերի,
պլանային հանձնաժողով,
գործկոմի նախագահին կից կադրերի
սեկտոր

և, բացի դրանից, յերկրամասի (մարզի)
տնտեսության առանձնահատկություններին
համապատասխան, Թեթև արդյունաբերու-
թյան, Մանրային արդյունաբերության, Ան-
տառային արդյունաբերության, Հացահա-
տիկային և անասնապահական սովխոզների
միութենական հանրապետական Ժողովրդա-
կան Կոմիտարիատների հաստատմամբ, աշ-
խատավորների պատգամավորների յերկրա-
յին (մարզային) Խորհուրդները կազմում են
բաժիններ կամ վարչություններ՝

Թեթև արդյունաբերության,
անդային արդյունաբերության,
անտառային արդյունաբերության,
հացահատիկային և անասնապահական
սովխոզների:

ՀՈՒՎԱԾ 93. Յերկրամասի (մարզի) պա-
մաններին համապատասխան, ԽՍՀՄ և ՌԽՖՍՀ

որենքների հիման վրա, ընդհանուր միու-
թենական Ժողովրդական Կոմիտարիատները
և Ներքին գործերի Ժողովրդական Կոմիտա-
րիատն աշխատավորների պատգամավորների
յերկրային (մարզային) Խորհուրդներին կից
կազմում են իրենց վարչությունները:

Մթերութիւնների կոմիտեն աշխատավորների
պատգամավորների յերկրային (մարզային)
Խորհուրդներին կից նշանակում է իր լիա-
զորները:

ՀՈՒՎԱԾ 94. Աշխատավորների պատգա-
մավորների յերկրային (մարզային) Խոր-
հուրդների բաժինները և վարչություններն
իրենց գործունեյության համար յենթարկ-
վում են Թե՛ աշխատավորների պատգամա-
վորների համապատասխան յերկրային (մար-
զային) Խորհրդին ու նրա գործադիր կոմի-
տեյին և Թե՛ ՌԽՖՍՀ համապատասխան Ժո-
ղովրդական Կոմիտարիատին:

ՀՈՒՎԱԾ 95. Վարչական շրջանների աշ-
խատավորների պատգամավորների Խորհուրդ-
ները և նրանց գործադիր կոմիտեները կազ-
մում են բաժիններ և իրենց աշխատանքը
տանում են ՌԽՖՍՀ գերագույն մարմիննե-
րի որենքների ու հրամանագրերի և աշխատա-
րի վորների պատգամավորների յերկրային (մար-
զային) Խորհուրդների վորուշութիւնների հիման
վրա:

ՀՈՂՎԱԾ 96. Աշխատավորների պատգամավորների ռայոնական խորհուրդները կազմում են պործադիր կոմիտեների հետևյալ բաժինները.

հողային,
ժողովրդական կրթության,
ֆինանսական,
ներքին առևտրի,
առողջապահության,
սոցիալական ապահովության,
ընդհանուր,
ճանապարհային,
պլանային հանձնաժողով,
գործկոմի նախագահին կից կադրերի սեկտոր և, բացի դրանից, ռայոնի տնտեսության առանձնահատկությունների համապատասխան, աշխատավորների պատգամավորների յերկրային (մարզային) խորհրդի հաստատմամբ, աշխատավորների պատգամավորների ռայոնական խորհուրդները կազմում են կոմունալ և տեղական արդյունաբերության բաժիններ:

ՀՈՂՎԱԾ 97. Ռայոնի պայմաններին համապատասխան, խՍՀՄ և ՌՍՖՍՀ որոշումներին հիման վրա, աշխատավորների պատգամավորների համապատասխան յերկրային (մարզային) խորհրդի հաստատմամբ՝ ներքին գործերի ժողովրդական կոմիտեների, աշխատավորների պատգամավորների ռայոնական խորհուրդներին կից, կազմում են իր վարչությունները:

աշխատավորների պատգամավորների ռայոնական խորհուրդներին կից, կազմում են իր վարչությունները:

ՀՈՂՎԱԾ 98. Աշխատավորների պատգամավորների ռայոնական խորհուրդների բաժիններն իրենց գործունեություն համար յենթարկվում են թե՛ աշխատավորների պատգամավորների ռայոնական խորհրդին ու նրա գործադիր կոմիտեին, և թե՛ աշխատավորների պատգամավորների յերկրային (մարզային) խորհրդի համապատասխան բաժնին:

ՀՈՂՎԱԾ 99. Աշխատավորների պատգամավորների քաղաքային խորհուրդները կազմում են գործադիր կոմիտեների հետևյալ բաժինները.

ֆինանսական,
կոմունալ տնտեսություն,
ներքին առևտրի,
առողջապահություն,
ժողովրդական կրթություն,
սոցիալական ապահովություն,
ընդհանուր,
պլանային հանձնաժողով,

գործկոմի նախագահին կից կադրերի սեկտոր և, բացի դրանից, քաղաքային արդյունաբերության, նրա քաղաքային և քաղաքամերձ տնտեսության առանձնահատկություններին համապատասխանորեն՝

տեղական արդյունաբերության,
հողային բաժիններ:

ՀՈՒՎԱԾ 100. Աշխատավորների պատգամավորների քաղաքային խորհուրդների բաժիններն իրենց գործունեությունը համարյան թարկվում են ինչպես աշխատավորների պատգամավորների քաղաքային խորհրդին և նրա գործադիր կոմիտեին, այնպես եւ աշխատավորների պատգամավորների ռայոնական խորհրդի համապատասխան բաժնին, կամ անմիջապես աշխատավորների պատգամավորների յերկրային (մարզային) խորհրդի համապատասխան բաժնին:

ՀՈՒՎԱԾ 101. Մոսկվայի և Լենինգրադի աշխատավորների պատգամավորների քաղաքային խորհուրդների բաժիններն իրենց գործունեությունը համարյան թարկվում են ինչպես Մոսկվայի և Լենինգրադի աշխատավորների պատգամավորների խորհրդին և նրա գործադիր կոմիտեին, այնպես եւ անմիջապես ՌԽՖՍՀ համապատասխան ժողովրդական կոմիսարիատին:

ՀՈՒՎԱԾ 102. Ազգային շրջանների աշխատավորների պատգամավորների խորհուրդները և նրանց գործադիր կոմիտեները շրջանի տերիտորիայում իրագործում են այն իրավունքներն ու պարտականությունները, վորոնք զբաղւած են նրանց վրա Ազգային

շրջանների կանոնադրությամբ», ինչպես նաև աշխատավորների պատգամավորների համապատասխան յերկրային (մարզային) խորհրդի վորոշումներով:

«Ազգային շրջանների կանոնադրությունը» սահմանվում է ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի կողմից:

ԳԼՈՒԽ IX.

ՌՈՒՍԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴՅՈՒՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ՀՈՒՎԱԾ 103. ՌԽՖՍՀ պետական բյուջեն կազմվում է ՌԽՖՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից և նրա ձեռքով ներկայացվում է ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի հաստատմանը:

ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի կողմից հաստատված ՌԽՖՍՀ պետական բյուջեն հրատարակվում է ի գիտություն ընդհանուրի: պարսկվում է ի գիտություն ընդհանուրի:

ՀՈՒՎԱԾ 104. ՌԽՖՍՀ Գերագույն հանձնախուրդն ընտրում է բյուջետային հանձնաժողով, վորը Գերագույն խորհրդին զեկուցում է իր յեզրակացությունը ՌԽՖՍՀ պետական բյուջեի վերաբերյալ:

ՀՈՒՎԱԾ 105. ՌԽՖՍՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունը

հաստատում ե ՌԽՖՍՀ Գերագույն Խորհուրդը և հրապարակում ե ի գլխավորությամբ ընդհանուրի:

ՀՈՒՎԱԾ 106. Ինքնավար հանրապետությունների բյուջեներում և տեղական յերկրային (մարզային) բյուջեներում, ինչպես նաև ինքնավար մարզերի, ազգային և վարչական շրջանների, ռայոնական, քաղաքային և գյուղական խորհուրդների բյուջեներում մտցվում են տեղական տնտեսությունից ստացված յեկամուտները, նրանց տերիտորիայում ստացված պետական յեկամուտներից տրվելիք հատկացումները, ինչպես նաև տեղական հարկերը և մուտքերն այն չափերով, վորոնք սահմանվում են ԽՍՀՄ և ՌԽՖՍՀ որենսդրությամբ:

ԳԼՈՒԽ X.

ԴԱՏԱՐԱՆԸ ՅԵՎ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՒՎԱԾ 107. Արդարադատությունը ՌԽՖՍՀ-ում իրագործվում ե ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանի, ինքնավար հանրապետությունների Գերագույն դատարանների, յերկրային ու մարզային դատարանների, ինքնավար մարզերի դատարանների, ազգային շրջանների դատարանների, վարչական շրջանների դատարանների, ԽՍՀՄ Գերա-

գույն Խորհրդի վորոշմամբ ստեղծվող ԽՍՀՄ հատուկ դատարանների, ժողովրդական դատարանների միջոցով:

ՀՈՒՎԱԾ 108. Բոլոր դատարաններում գործերի քննարկումն իրագործվում ե ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, բացի այն դեպքերից, վորոնք հատկապես նախատեսված են որենսդրով:

ՀՈՒՎԱԾ 109. ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանը հանդիսանում ե ՌԽՖՍՀ բարձրագույն դատական մարմինը: ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանի վրա յե դրվում ՌԽՖՍՀ և ինքնավար հանրապետությունների ու մարզերի բոլոր դատական մարմինների դատական գործունեության հսկողությունը:

ՀՈՒՎԱԾ 110. ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանն ընտրվում ե ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի կողմից 5 տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 111. Ինքնավար հանրապետությունների Գերագույն դատարանն ընտրվում ե ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների կողմից 5 տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 112. Յերկրային և մարզային դատարանները, ինքնավար մարզերի դատարանները, ազգային և վարչական շրջանների դատարաններն ընտրվում են աշխատավորների պատգամավորների յերկրային, մար-

դային Նորհուրդների կամ ինքնավար մարզերի աշխատավորների Նորհուրդների կամ ազգային վարչական շրջանների աշխատավորների պատգամավորների Նորհուրդների կողմից 5 տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 113. Ժողովրդական դատարաններն ընտրվում են ռայոնի քաղաքացիների կողմից՝ ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, 3 տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 114. Դատավարությունը ՌԽՖՍՀ-ում կատարվում է ռուսերեն լեզվով կամ ինքնավար հանրապետության կամ ինքնավար մարզի կամ ազգային շրջանի լեզվով, այդ լեզվին չտիրապետողների համար ապահովելով լիակատար ծանոթացումը դատավարության նյութերին թարգմանչի միջոցով, ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանգես գալու իրավունքը:

ՀՈՒՎԱԾ 115. Գործերի քննությունը ՌԽՖՍՀ բոլոր դատարաններում կատարվում է գեներաց, քանի վոր որենքով չեն նախատեսված բացառություններ, մեղադրյալի համար ապահովելով պաշտպանվելու իրավունքը:

ՀՈՒՎԱԾ 116. Դատավորներն անկախ են և միայն որենքին են յենթարկվում:

ՀՈՒՎԱԾ 117. Բոլոր ժողովրդական կոմիտեների և նրանց յենթակա հիմնարկների, առանձին պաշտոնական անձերի, ինչպես նաև քաղաքացիների կողմից ՌԽՖՍՀ տերիտորիայում որենքները ճշգրիտ կերպով կատարելու բարձրագույն պերահսկողությունն իրագործվում է անմիջականորեն թե ՆՍՀՄ Դատախազի կողմից և թե ՌԽՖՍՀ Դատախազի միջոցով:

ՀՈՒՎԱԾ 118. ՌԽՖՍՀ Դատախազը նշանակվում է ՆՍՀՄ Դատախազի կողմից 5 տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 119. Յերկրային և մարդային դատախազները, ինչպես նաև ինքնավար հանրապետությունների և ինքնավար մարզերի դատախազները նշանակվում են ՆՍՀՄ դատախազի կողմից 5 տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 120. Ազգային և վարչական շրջանների դատախազները, ռայոնական և քաղաքային դատախազները, նշանակվում են ՌԽՖՍՀ Դատախազի կողմից ՆՍՀՄ Դատախազի հաստատությամբ 5 տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 121. Դատախազության մարմիններն իրենց ֆունկցիաներն իրագործում են անկախ տեղական վորեն մարմնից, յենթարկվելով միայն ՆՍՀՄ Դատախազին:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԻՍՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 122. ՌԽՅՍՀ քաղաքացիներն
ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝
ապահովված աշխատանք ստանալու իրա-
վունք, նրանց աշխատանքը վարձատրելով
նրա քանակի ու վորակի համապատասխան:

Աշխատանքի իրավունքն ապահովվում է
ժողովրդական տնտեսության սոցիալիստա-
կան կազմակերպմամբ, խորհրդային հասո-
րակության արտադրողական ուժերի անշեղ
աճմամբ, տնտեսական ճշնաժամերի հնարա-
վորության վերացմամբ և գործազրկության
լիկվիդացիայով:

ՀՈՂՎԱԾ 123. ՌԽՅՍՀ քաղաքացիներն
ունեն հանգստի իրավունք:

Հանգստի իրավունքն ապահովվում է բան-
վորների ճշող մեծամասնության համար
աշխատանքային օրը կրճատելով, — հասցնե-
լով 7 ժամի, բանվորների և ծառայողների
համար տարեկան արձակուրդ օտանանելով,
վորի ընթացքում պահպանվում է նրանց
աշխատավանձը, աշխատավորներին սպասար-
կելու համար տրամադրելով սանատորիա-
ների, հանգստի տների, ապոմեքների լայն
ցանց:

ՀՈՂՎԱԾ 124. ՌԽՅՍՀ քաղաքացիները
ծերության ժամանակ, ինչպես նաև հիվան-
դության և աշխատունակությունը կորցնե-
լու դեպքում ունեն նյութական ապահովու-
թյան իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է բանվոր-
ների և ծառայողների՝ պետության հաշվին
կատարվող սոցիալական ապահովագրության
լայն ծավալմամբ աշխատավորության տրվե-
լիք բժշկական ձրի օգնությամբ, աշխատա-
վորների ոգտագործման համար կուրորտնե-
րի լայն ցանց տրամադրելով:

ՀՈՂՎԱԾ 125. ՌԽՅՍՀ քաղաքացիներն
ունեն կրթության իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է ընդհա-
նուր, պարտադիր տարրական կրթությամբ,
կրթության անվճարությամբ՝ ներառյալ
բարձրագույն կրթությունը, բարձրագույն
գպրոցում սովորողների ճշող մեծամասնու-
թյանը տրվող պետական թոշակների սխտե-
մով, գպրոցներում մայրենի լեզվով ուսու-
ցանելով, գործարաններում, սովխոզներում,
մեքենատրակտորային կայաններում և կոլ-
խոզներում աշխատավորների համար ձրի
արտադրական, տեխնիկական և ագրոնոմիա-
կան ուսուցում կազմակերպելով:

ՀՈՂՎԱԾ 126. ՌԽՅՍՀ ում կնծը տրվում
են տղամարդուն հավասար իրավունքներ՝

տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում:

Կանանց այդ իրավունքների իրագործման հնարավորությունն ապահովվում է նրանով, վոր տղամարդու հետ համահավասար, կնոջը վերադանվում է աշխատանքի, աշխատավարձի, հանգստի, սոցիալական ապահովության և կրթության իրավունք, ապահովվում է մոր և մանկան շահերի պետական պաշտպանությունը, կնոջը՝ հղիության ժամանակ՝ արձակուրդ տրամադրելով՝ աշխատավարձը պահպանելով հանդերձ, ծննդատների, մանկամսուրների և մանկապարտեզների լայն ցանցով:

ՀՈՒՎԱԾ 127. ՌԽՖՍՀ քաղաքացիների իրավահավասարությունը, անկախ նրանց ազգությունից և ռասայից, տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում հանդիսանում է անխախտ որենք:

Քաղաքացիների իրավունքների վորևե ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը, կամ, ընդհակառակը, ռասայական և ազգամասերի պատկանելությունից յեղնելով ուղղակի կամ անուղղակի առավելություններ սահմանելը, ինչպես և ռասայական ու ազգային բացառիկության, կամ ատելության ու

արհամարհանքի ամեն տեսակի քարոզ — պատժվում են որենքով:

ՀՈՒՎԱԾ 128. Նպատակ ունենալով ապահովել քաղաքացիների խղճի ազատությունը, ՌԽՖՍՀ-ում յեկեղեցին բաժանված է պետությունից և դպրոցը՝ յեկեղեցուց: Կրոնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրոնական պրոպագանդի ազատությունը ճանաչվում է բոլոր քաղաքացիների համար:

ՀՈՒՎԱԾ 129. Աշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական իրավակարգն ամրացնելու նպատակով, ՌԽՖՍՀ քաղաքացիների համար որենքով ապահովվում է.

ա) խոսքի ազատություն,

բ) մամուլի ազատություն,

գ) ժողովների ու միտինգների ազատություն,

դ) փողոցային յերթերի ու ցույցերի ազատություն:

Քաղաքացիների այդ իրավունքներն ապահովվում են՝ աշխատավորներին և նրանց կադմակերպություններին տրամադրելով տպարաններ, թղթի պաշարներ, հասարակական շենքեր, փողոցներ, կապի միջոցներ և նյութական այլ պայմաններ, վորոնք անհրաժեշտ են դրանց իրագործման համար:

ՀՈՒՎԱԾ 130. Աշխատավորների շահերին համապատասխան և ժողովրդական մասսաների կազմակերպչական ինքնագործունեությունը և քաղաքական ակտիվությունը զարգացնելու նպատակով ՌԽՖՍՀ քաղաքացիների համար ապահովվում և հասարակական կազմակերպությունների մեջ միավորվելու իրավունքը—արհեստակցական միություններ, կոոպերատիվ միավորումներ, յերիտասարդություն կազմակերպություններ, սպորտային և պաշտպանողական կազմակերպություններ, կուլտուրական, տեխնիկական ու գիտական ընկերություններ, իսկ բանվոր դասակարգի շարքերից և աշխատավորների մյուս խավերից ամենից ակտիվ և գիտակից քաղաքացիները համախմբվում են Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության մեջ, վորը հանդիսանում և աշխատավորների առաջավոր ջոկատը՝ սոցիալիստական կարգերն ամրացնելու ու զարգացնելու համար նրանց մղած պայքարում, և վորն իրենից ներկայացնում և աշխատավորների բոլոր՝ ինչպես հասարակական, այնպես ել պետական կազմակերպությունների ղեկավար կորիզը:

ՀՈՒՎԱԾ 131. ՌԽՖՍՀ քաղաքացիների համար ապահովվում և անձի անձեռնմխելիություն: Վոչ-վոճ չի կարող ձերբակալվել

այլ կերպ, քան դատարանի վորոշմամբ կամ դատախազի սանկցիայով:

ՀՈՒՎԱԾ 132. Քաղաքացիների բնակարանի անձեռնմխելիությունն ու նամակագրություն գաղտնապահությունը պահպանվում են որենքով:

ՀՈՒՎԱԾ 133. ՌԽՖՍՀ աղաստանի իրավունք և վերապահում ոտարերկրյա քաղաքացիներին, վորոնք հետապնդվում են աշխատավորների շահերը պաշտպանելու կամ գիտական գործունեություն կամ ազգային-ազատագրական պայքարի համար:

ՀՈՒՎԱԾ 134. ՌԽՖՍՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր և պահպանել Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը, կատարել որենքները, պահպանել աշխատանքի կարգապահությունը, ազնվորեն վերաբերվել հասարակական պարտականությունը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները:

ՀՈՒՎԱԾ 135. ՌԽՖՍՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր և պահպանել ու ամրացնել հանրային, սոցիալիստական սեփականությունը, վորպես խորհրդային կարգերի սրբազան ու անձեռնմխելի հիմք, վորպես հայրենիքի հարստության ու հզորության աղբյուր, վերպես բոլոր աշխատավորների

ունեւոր ու կուտուրական կյանքի աղբյուր։
Հանրային, սոցիալիստական սեփականու-
թյան վրա ձեռք բարձրացնող անձերը ժողո-
վրդի թշնամիներ են հանդիսանում։

ՀՈՒՎԱԾ 136. Ընդհանուր զինվորական
պարտականությունը հանդիսանում է որենք։
Զինվորական ծառայությունը Բանվորա-
Գյուղացիական Կարմիր Բանակում ՌԽՖՍՀ
քաղաքացիների պատվավոր պարտականու-
թյունն է։

ՀՈՒՎԱԾ 137. Հայրենիքի պաշտպանու-
թյունը ՌԽՖՍՀ յուրաքանչյուր քաղաքացու
սրբազան պարտքն է։ Հայրենիքին դավաճա-
նելը՝ յերգումը խախտելը, թշնամու կողմն
անցնելը, պետության ռազմական հզորու-
թյանը վնաս հասցնելը, լրտեսությունը—
պատժվում են որենքի ամենայն խստու-
թյամբ, վորպես ամենածանր չարագործու-
թյուն։

ԳԼՈՒԽ XII.

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈՒՎԱԾ 138. Պատգամավորների ընտ-
րություններն աշխատավորների պատգա-
մավորների բոլոր խորհուրդների մեջ—
ՌԽՖՍՀ Գերագույն խորհուրդ, աշխատա-
վորների պատգամավորների յերկրային և

մարզային խորհուրդներ, Խնքնավար հան-
րապետությունների Գերագույն խորհուրդ-
ներ, Խնքնավար մարզերի աշխատավորների
պատգամավորների խորհուրդներ, ազգային
և վարչական շրջանների աշխատավորների
պատգամավորների խորհուրդներ, ռայոնա-
կան, քաղաքային և գյուղական (ստանի-
ցայի, գյուղակի, խուտորի, աուլի) աշխա-
տավորների պատգամավորների խորհուրդ-
ներ,—ընտրողների կողմից կատարվում է
ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրա-
կան իրավունքի հիման վրա, դադանի քվե-
արկությամբ։

ՀՈՒՎԱԾ 139. Պատգամավորների ընտ-
րություններն ընդհանուր են—ՌԽՖՍՀ բո-
լոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրա-
ցել է, անկախ ռասայական ու ազգային
պատկանելիությունից, դավանանքից ու կրո-
թական ցենզից, նստակեցությունից, սոցիա-
լական ծագումից, գույքային դրությունից
և անցյալ գործունեյությունից, իրավունք
ունեն մասնակցելու պատգամավորների ընտ-
րություններին և ընտրվելու՝ բացի խեղա-
գարներից և այն անձերից, վորոնք դատա-
րանի կողմից դատապարտված են՝ ընտրա-
կան իրավունքների զրկումով։

ՀՈՒՎԱԾ 140. Պատգամավորների ընտ-
րությունները հավասար են. յուրաքանչյուր

քաղաքացի ունի մի ձայն, բոլոր քաղաքացիները մասնակցում են ընտրություններին հավասար հիմունքներով:

ՀՈՒՎԱԾ 141. Կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են տղամարդկանց հետ համահավասար:

ՀՈՒՎԱԾ 142. Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են բոլոր քաղաքացիների հետ համահավասար:

ՀՈՒՎԱԾ 143. Պատգամավորների ընտրությունները լինում են ուղղակի աշխատավորների պատգամավորների ընտրությունները բոլոր խորհուրդներում, սկսած աշխատավորների պատգամավորների գլուղական և քաղաքային խորհրդից մինչև ՌԽՖՍՀ Գերագույն խորհուրդը, քաղաքացիների կողմից կատարվում են անմիջականորեն, ուղղակի ընտրությունների միջոցով:

ՀՈՒՎԱԾ 144. Պատգամավորների ընտրության ժամանակ քվեարկությունը կատարվում է գաղտնի:

ՀՈՒՎԱԾ 145. ՌԽՖՍՀ աշխատավորների պատգամավորների խորհուրդների ընտրությունները կատարվում են ըստ ընտրական տիրույթների հետևյալ նորմաներով՝

յերկրային (մարզային) խորհրդում, նախած յերկրամասի կամ մարզի մեծությամբ,

մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 15 հազար և վոչ ավելի, քան 40 հազար բնակչից, ինքնավար մարզի մարզային խորհրդում, նախած ինքնավար մարզի մեծությամբ, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 1500 և վոչ ավելի, քան 2000 բնակչից:

աղգային տիրույթի խորհրդում, նախած աղգային տիրույթի մեծությամբ, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 100 և վոչ ավելի, քան 500 բնակչից,

վարչական տիրույթի խորհրդում, նախած վարչական տիրույթի մեծությամբ, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 2000 և վոչ ավելի, քան 10.000 բնակչից,

ռայոնական խորհրդում, նախած ռայոնի մեծությամբ, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 500 և վոչ ավելի, քան 1500 բնակչից,

քաղաքային խորհրդում և քաղաքների ռայոնական խորհրդում, նախած քաղաքի կամ քաղաքային ռայոնի մեծությամբ, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 100 և վոչ ավելի, քան 1000 բնակչից,

Մոսկվայի և Լենինգրադի խորհուրդներում՝ մի պատգամավոր 3000 բնակչից,

գլուղական խորհրդում, նախած գլուղական խորհրդի գործունեություն ռայոնի մեծությամբ, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 100 և վոչ ավելի, քան 250 բնակչից:

Աշխատավորների պատգամավորների յուրաքանչյուր յերկրային (մարզային) Խորհրդի, ինքնավար մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհրդի, ազգային և վարչական շրջանի աշխատավորների պատգամավորների Խորհրդի, աշխատավորների պատգամավորների ռայոնական և քաղաքային Խորհրդի համար ընտրական նորմաները սահմանվում են «ՌԽՖՍՀ աշխատավորների պատգամավորների Խորհուրդների ընտրությունների կանոնադրությամբ» այն ընտրական նորմաների սահմաններում, վորոնք մատնանշված են այս հոդվածում:

Աշխատավորների պատգամավորների գլուխական Խորհուրդների համար ընտրական նորմաները սահմանվում են աշխատավորների պատգամավորների յերկրային (մարզային) Խորհուրդների, ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների և ինքնավար մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների կողմից այն ընտրական նորմաների սահմաններում, վորոնք մատնանշված են այս հոդվածում:

ՀՈՒՎԱԾ 146. Ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական օկրուգների:

Թեկնածուներ առաջադրելու իրավունքը վերապահվում է հասարակական կազմակեր-

պություններին և աշխատավորներին ընկերություններին՝ կոմունիստական կուսակցական կազմակերպություններին, արհեստակցական միություններին, կոոպերատիվներին, յերիտասարդության կազմակերպություններին, կուլտուրական ընկերություններին:

ՀՈՒՎԱԾ 147. Յուրաքանչյուր պատգամավոր պարտավոր է հաշվետվություն տալու ընտրողների առաջ իր աշխատանքի և աշխատավորների պատգամավորների Խորհրդի կատարած աշխատանքի մասին և ամեն ժամանակ կարող է հետ կանչվել ընտրողների մեծամասնության վճռով: Դրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ XIII.

ԳԵՐԲԸ, ԴՐՈՇԱԿԸ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

ՀՈՒՎԱԾ 148. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության պետական գերբը բաղկացած է վոսկե մանգոյի և մուրճի նկարից, վորոնք զետեղված են խաչաձև, կոթերը դեպի ներքև, արևի ճառագայթների մեջ կտրվիլ ֆոնի վրա և հասկելի շրջանակում «ՌԽՖՍՀ» և «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք» մականգրությամբ:

ՀՈՒՎԱԾ 149. Ռուսաստանի Խորհրդային

Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության պետական զրոշակը կազմված է կարմիր քաթանից, վորի ձախ անկյունում, վերևում կոթի մոտ գետեղված են «ՌԽՖՍՀ» տառերը:

ՀՈԴՎԱԾ 150. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության մայրաքաղաքը, հանդիսանում է Մոսկվա քաղաքը:

ԳԼՈՒԽ XIV.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 151. ՌԽՖՍՀ Սահմանադրության փոփոխումը կատարվում է միայն ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի վորոշմամբ, վորն ընդունվում է Գերագույն Խորհրդի ձայների առնվազն յերկու յերրորդի մեծամասնությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՂ

Խորհուրդները համառոտական Արտակարգ 17-րդ համագումարի վորոշումը՝ Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը (Հիմնական Որենքը) հաստատելու մասին 2

Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը (Հիմնական Որենքը)

Գլուխ	I. Հասարակական կառուցվածքը	3
Գլուխ	II. Պետական կառուցվածքը	7
Գլուխ	III. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինները	13
Գլուխ	IV. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության պետական կառավարման մարմինները	18
Գլուխ	V. Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն մարմինները	24
Գլուխ	VI. Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների պետական կառավարման մարմինները	28

Գլուխ VII.	Խնդրավար մարզերի պետական իշխանության մարմինները	30
Գլուխ VIII.	Պետական իշխանություն տեղական մարմինները	31
Գլուխ IX.	Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության բյուջեն	41
Գլուխ X.	Դատարանը և դատախազությունը	42
Գլուխ XI.	Քաղաքացիների հիմնական իրավունքն՝ ընդ ազատականությունները	46
Գլուխ XII.	Ընտրական սիստեմը	52
Գլուխ XIII.	Գերբը, դրոշակը, մայրաքաղաքը	57
Գլուխ XIV.	Սահմանադրության փոփոխությունները	58



Ответственный по выпуску Чатыньян П. А.
 Тех. редактор Жданович Л. М.
 Корректор Аюпян С.

Сдано в набор 17 октября 1937 г. Подписано в печать 29 октября 1937 г. Формат 70х96/32. Объем 17/8 п. л.
 Тираж 3.000

Уполобллит № 4—5260. Типография Областного армянского изд-ва „Большевик“, Ростов-Дон, Ворошиловский пр. № 27. Заказ № 1952.

ՀՀ Ազգային գրադարան



NL0215006

Հիշել 30 ԿՈՊ.
Цена 30 коп.

104 86

34 800

На армянском языке

КОНСТИТУЦИЯ

(ОСНОВНОЙ ЗАКОН)

РОССИЙСКОЙ СОВЕТСКОЙ ФЕДЕРАТИВНОЙ
СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕСПУБЛИКИ

РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО
„БОЛЬШЕВИК“

Ростов-Д., Ворошиловский пр. №27